

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N

1599-Ա

«Գ» հոկտեմբեր 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՊՐԱՆՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «ՎԻՈԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի օգոստոսի 3-ին կնքված N ARM 506-G-02-T-AG0736 մատակարարման պայմանագիրը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «ՎԻՈԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի օգոստոսի 3-ին կնքված N ARM 506-G-02-T-AG0736 մատակարարվող պայմանագրով ձեռքբերված ապրանքը՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ա.Կարապետյանին՝
 - 1) ապահովել սույն հրամանի 1-ին կետից բխող ֆինանսական հաշվարկների և նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ա.Մանուկյանին:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ



Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2009 թվականի «19»-ի N 1599 -Ա հրամանի

ՑԱՆԿ

«ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ

N	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿ (հատ)	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ (ՀՀ դրամ)
1.	Թեստ համակարգ	51	2.881.500
2.	Թեստ համակարգ 1	10	2.350.000
3.	Թերմոկոնտեյներ 2 սառույցի շշերով	24	1.308.000
	Ընդամենը		6.539.500